

12. ՄՈՍԹՈՒՌԱՋՈՒ ԿՆԻԿ

Մեկ մարթըմ կէլի, կէրթա մեկ քանղաքյըմ: Քանղքյի մեչ կան կը գա, կը տեսի, օր մեկ խանըմ փանջարեն վեր էնու գյըլուխ խանե տուս:

Մարթն էլ կը նայե էտու հիրիս: Չում ճաշոցին էտա մարթ մընաց տա կանուկ:

Խանըմ իշկեց՝ տըլ հալա մարթ կանուկ ա տա:

Ասաց. – Մա՛րթ, ի՞նչ կուզես:

Ասաց. – Վոլլա՛, խանը՛մ, իմ աչք մընացե քյե, դորսվան տուս գյինաս, բալկո ձի պաքյըմ, յան ծեռ տաս:

Խանըմ տուռ էպաց, կանչեց մարթուն, էպե ներս:

Մարթն ասաց. - Դե՛, խա՛նըմ, ձի պա՛քյըմ տու:

Խանըմ ասաց. – Չէղի՛, ես քյե մեկ մոսթուռե՛մ տամ, տա՛ր էնտուց էրկու գազ պե՛ ձի, ես քյե ծեռ կը տամ:

Խանըմն էլ կուզա փորձա, խի էտա մարթ շըռա՞դ ա, շո՞ւն ա, թի չէ՝ խախալոզի մեկն ա:

Էտա մոսթուռեն միայն էտա խանըմի իրկան տուքան կընդըվի, հուրուշ տեղ չըկա:

Մարթն առավ մոսթուռեն, տուքըյներ կան կը գա, ո՛ր տուքան կը տանի, էնտուց չըկա:

Գյընաց, պատահավ խանըմի իրկան տուքան, շանց էտուր տուքյընտարին, ասաց. – Էսա կըտորից չունի՞ս:

Խանութպան առավ, աչկեց, օր ճիշտ էն կըտորն ա, օր ուր կընգան մոտն էր:

Ասաց. – Ձա՛նըմ, էսա մարթ խանլիմ, էսա ի՞նչըխ գանցե մեր տուն, էսա կըտոր ըցկե ուր ծեռ:

Ասաց. – Մա՛րթ, էտա կըտոր վո՞ն ա տըվե քյե:

Ասաց. – Ձա՛նըմ, քու կո՞րծն ինչ ա, էսա կըտորից տու էրկու նետ տու ձի:

Ասաց. – էրկու նետ էրկու ոսկի յա, էրկու ոսկի տո՛ւ, քյե էրկու նետ տամ:

Մարթն ասաց. - Վոլլա՛, փարա չունեմ, էմալ տուր, չուր աշխատեմ, քու փարեն տամ:

Ասաց. - Չէ՛, խի ինչի՞ խամար ա, ձի ասա՛, օր տամ:

Մարթն ասաց. – Ես էկա քանքյի մեչ, փանջարե՛մ վե ես խանըմըմ տեսա: Իմ սիրտ շատ զէնի ուզեց: Ես էլ գացի, էն խանըմից խընտրեցի, պաքյըմ ուզեցի: էն էլ էսա կըտոր իտու ձի, ասաց՝ տա՛ր, էսա կըտորից էրկու նետ պե՛, քյե պաքյըմ տամ:

Խանուքպան շըֆա ընգավ, ասաց. – Վոլլա՛, ես էրկու նետ տը տամ էնոր, ինգիմ հետև, խի ո՞ր տեղ վե կէրթա, առնիմ ծեռնեն:

էնի գյընաց, խանուքպան տուքյընի տուռ փակեց, հա հուշիկ-հուշիկ ընգավ հետև:

Խանուքպան տեսավ, օր գյընաց, մըտավ ուր տուն:

Խանուքպանի կնիկ հիրիշկաց, կը խի, օր ուր մարթ հետևեն կը գա, շոտ կըտոր մարթու ծեռնեն առավ, պախեց, մարթն փաթուքեց խըսիր, կանըցուց պատի էրես վեր, իրիկ տուռ տըփեց:

Կնիկ գյընաց, տուռ էպաց:

Ասաց. – Մա՛րթ, տու հե՞ր հէսօր ընցնա շոտ քու խանուք կոծեցիր, էկար:

Մարթ չըգյինա՝ կընգանն ի՞նչ ասա:

Ասաց. – Կնի՛կ, ես իմ ջեբի տանանակ կուրիսեր եմ, էնոր խամար շոտ էկա, տուն կան կը գամ, խի ո՞ր տեղն եմ էցկե:

Խանուքպան տուն հըմեն աչկեց, վեր ցածր, էլ տեղ չէթող, օր չաչկեց, մարթ չըտեսավ:

Ինքյ-ինքյ մըտածեց, ասաց. «Ձա՛նըմ, էս ի՞նչ ա, ես տեսա՝ էտա մարթ չում իմ տուն էկավ, էկավ, մըտավ ներս, էս ի՞նչըխ էղավ: էսի խիյա՞լ էր, չարքյ էր, էսի ի՞նչ մանդա էր»:

Ետ տանցնավ, գյընաց, նըստավ ուր խանուք, ու կնիկ էլնավ, ըզմարթ տընեն խանեց տուս, ասաց. – Հէսօր գյընա՛, գյիշերս մեկ

տեղ կա՛ց, վանդն արի՛, նոր քյե պաքյըմ տամ, հէսօր իմ իրիկ շըֆա գանցեր ա, չըլնի մեկէլ ետ տանռնա: Օր քյե տեսնի՝ ձիկ էլ, քյիկ էլ կը սպանա:

Մարթն տընեն էլավ գյընանց, հուրհուշ տեղըմ պառկավ չուր առավոտ:

Առավոտուն գինա էկավ: Էկավ, գյընանց խանըմի տուռ տըփեց:

Ասաց. – Խա՛նըմ, դե՛, ձի պաքյըմ տու, ես վանռվա, էրա քու սիրուց:

Ասաց. – Արի՛, քյե մոսքուռե՛մ տամ, գյընա՛, էնտուց նետ մ' էլ պե, քյե պաքյըմ տամ:

Մոսքուռեն էտու, գյընանց կան էկավ, կան էկավ, չըկընդավ, էլըմ գյընանց խանըմի իրկան մոտ:

Խանուքպան ասաց. – Հե՛յ, մարթ, էլման տու էկա՞ր:

Ասաց. – Խա՛, ես էկա:

Ասաց. – Ի՞նչ կուզես:

Ասաց. – Մեկ նետ էսա մոսքուռից տու ձի:

Ասաց. – Փարա ունի՞ս:

Ասաց. – Չէ՛, չէ՞ ես էրեկ քյե ասի՝ փարա չունիմ, պանեմ, տամ քյե:

Ասաց. – Քյե անփարա կը տամ, լե տու տը պատմես խի հէրեկի քու տարած ի՞նչըխ էղավ, պա մ'էրի՞ր:

Մարթն ասաց. – Ես հէրեկ տարա, խանըմ պատրաստվավ՝ ձի պաքյըմ տը տեր, էնու իրիկ էկավ, տուռ տըփեց:

Ասաց. – Ապա տու դո՞ր պաղկըվար:

Ասաց. – Ձի փանքուքեց խըսիրի մեչ, կանցուց պատի էրես վեր:

Խանուքպան հինքյն ուր ասաց. «Վա՛յ, ես չըֆահմա էտա պանին»:

Էլավ, նետըմ էտուր էտոր մոսքուռից:

Մարթն առավ ապրանքյն, տարավ, ինքյն էլավ, ընգավ հետև:

Մարթն գյընանց, մըտավ տուն, ասաց. – Դե, խա՛նըմ, շոտ ձի պա՛քյըմ տուր, էսա էրկու օր ա ձի պաքյըմ չըտըվիր:

Ասելուն պես՝ իրիկ տուռ տըփեց:

Կնիկ էտա մարթ փաթթեց լըխեֆներ ու էտի լըխեֆներու գէղվենքյ:

Գյընանց, տէուռ էպանց, իրիկ էկավ ներս:

Ասաց. – Մա՛րթ, խե՛ր էղի, էսա էրկու օր կա՝ տէու ցերեկով խանութից կը թողնիս, կը գանս, ի՞նչ էղեր:

Մարթն ասաց. – Ես ձի ըռովել մ'եմ առի, պիրիմ վեր մեր խըսրին չըբռեմ, խի՞ խըսիր կը քանկա՞:

Խըն ըռովել զանրկելուն խըսիր, խըսրի ծալեր կըտրեց, գյընանց, խասավ պատ:

Ինքյն գյինա, թե մարթ փաթուկ ա խըսիր վեր:

Խըսիր քանշեց ըստեխ, քանկեց աչկեց, մարթ չըկա մեչ խըսիրին:

Ասաց ինքյ ուր.«էսա չա՞րքյ էր, էսա ի՞նչ էր»:

Ինգանվ, տուն փընտըռեց, մարթ չըկընդանվ:

Մարթն տանռցավ, գյընանց էնու խանութ:

Խանըմ լըխեֆի մեչեն մարթէուն խանեց, ճանմխեց, ասաց. – Հէսօրն էլ գյընա՛, քանի իմ իրիկ չըտանռցե ետ, առավոտուն արի՛:

Առավոտուն էկավ, էլըմ խանըմ էնու նոր կըտորըմ մոսթուռա էտուր, ճանմխեց, ասաց. – Գյընա՛, էնա տէուց էրկու նետ ձի խամար պե՛, նոր ես քյե պաքյըմ կը տամ:

Ինքյն էլանվ, գյընանց էնտեղ:

Ասաց. – Էրկու նետ էսա տէուց տու ձի, օր խանըմ ընձի պաքյըմ տա:

Ասաց. – Չէ՞ հէրեկն էլ տարար, տէու պա՛ն չըկարցա՞ր էներ:

Ասաց. – Չէ՛, ես խըն տանելուն էնու իրիկ էկավ, տէուռ տըփեց:

Ասաց. – Ապա քյե ո՞ր տեղ պանկվըցուց:

Ասաց. – Լըխեֆի մեչ:

Մարթն առավ էն էրկու նետ ապրանքյ, էնի ինգանվ հետև:

Գյեղական մըտավ ներս, էտու խանըմին:

Ասաց. – Խա՛նըմ, դե ձի պա՛քյըմ տու: Ամլե՛մ օր տէու ձի կը խանպես, կը տանես, կը պիրիս:

Խանբար պերան՝ իրիկ տէուռ տըփեց:

Կնիկ գյընանց, մարթուն տանրանվ, պանխեց դոլաբ վեր, տանռցավ էկավ, տէուռ էպանց:

Տեսավ ուր իրիկ, ասաց. – Մա՛րթ, տու էսա էրկու օր կա՝

տուքան կը թոնես մըշամուր, կը գան, ի՞նչ էղե քյե:

Ասաց. – Վոլլա՛, հէսօր էլ մեկ տապանջե մ'եմ առե, պերիմ, փորձիմ, խեմ, թե լավ ա, առիմ:

Էզա՛ր լըխեֆներուն: Լըխեֆներ քանկեց, աչկեց տեսավ, օր գյուլեն գանցե, տիպե պատ, լըխեֆն էլ ծակե՝ մարթ չըկեր հինե:

Մարթ մտածեց, ասաց. «Ջա՛նըմ, էսա մարթ ձի կը խապա, էսա ո՞ր տեղն ա պաղկըվե»:

Մարթ մըտածեց ասաց. «Թոնեմ էրթամ, թե մեկ էլ էկավ, պանն առեց, տ'ընգիմ իտև գանմ, իմ կընգանն ասեմ, թե էսպես պա՛ն տու կէնես, էսպես մարթըմ կա, կը գա ապրանքյ կառի, օր էնու պաքյ տաս»:

Մարթն օր կէրթա, կնիկ կէրթա պաղկովող մարթուն կը խանա տուս, կասա. – Գյընա՛, չէլնի իմ մարթ մեկէլ տառնա գա, գյընա՛, առավոտուն արի՛:

Առավոտուն մարթն էլըմ էկավ:

Ասաց. - Խա՛նըմ, ես քու բախտ, տու պաքյըմ տաս ձի:

Կնիկն ասաց. – Ա՛ռ նա կըտոր, տա՛ր, էրկու նետ ձի խամար պե՛:

Մարթն էլավ, գյընաց էնու իրկան տուքան: Էրկու նետ էնտուց առեց, էկավ: Իրիկ ինգավ մարթու հիտև:

Մարթն ներս մըտավ, չըմըտավ, իրիկ տուռ տըփեց:

Կնիկ էպի, մարթուն չոլխըցուց, կոմիկըմ ընցուց գյըլուխ, աչքերու տեղ ծակեց, օր լուս էրևեր, տարավ, մարթուն մըտուց բաղչի հավուզին մեչ:

Մարթուն ասաց. – Ես, իմ իրիկ շարթ կը պըռնենքյ, քար տը զանենք էսա կոմկին, խի՛ ո՛ր տեպուց, էտու խոսկեր ճիշտ ա, ո՛ր օր չըտիպուց, էնու խոսկեր սուբ ա: Ես օր կը զանիմ, տու քու գյըլուխ պե իմ քարի տեմ, չըլնի՝ քար բառնտի ընցնի, օր իմ իրիկ կը զանա, տու քու գյըլուխ տար էնի տեղ, թըխ քար բառնտի ընցի:

Գյընաց, տուռ էպաց, իրիկ էկավ ներս: Էկավ, տապանջե մ'էզար դոլաբին, էնի գյինա՝ մարթ դոլաբ վեն ա:

Կնիկ ասաց. – Մա՛րթ, տու ծըռա՞ր, տու մեր խըսիր ըռովելով զարկիր, լըխեֆներ ըռովելով զարկիր, մեր դոլաբ զարկիր, մե էսքան վնաս տվիր:

Ասաց. – Կնի՛կ, մարթըմ կա, օր ձիզնից էնա իրեքյ տիր ապ-

րանքյ կը գյընանա, կը պերա մը քյե, ես կընգիմ հիտև, չըմ կանա պըռնե էնի մեր տան մեչ. նա հըմեն քու էրածն ա:

Կնիկ ասաց. – Տու սուք կասես: Քյելա էրթանքյ մեր հանվուզ, կոմիկըմ կա վըր ճըրուն. ես իրեքյ քար զանեմ, էն ժամանակին օր ես տիպուցի կոմկին, տու սուք կասես, օր տու տիպուցիր, ես սուք կասեմ:

Կնիկ իրեքյ քար կը զանա, իրեքյն էլ կը տիպուցա: Ո՛ր մեկ քար օր սըխալ էրթա, մարթն կոմիկ կը պերա տեմ: Մարթու քարեր օր կը զանա, մեկն էլ չըն տիպի: Ճըրու մեչի մարթ ուր գյըլուխ կը քաշա տեն՝ չըտիպի:

Մարթն կիմանա, թե կոմիկ զատ կոմիկ չէր:

Շոտըմ մարթն կէրթա խանըմի խոր մոտ: Խանըմի խերն էլ էնտեղաց մուքասըրըֆն ա:

Կասա, թե. – Քու ախչիկ էսպես պա մ'էրաց:

Մարթեր կասեն. – Տը գանքյ քննենքյ, թե էնպես ա, կընգան վիզ կը զանենքյ, թէ էնպես չի՝ քու վիզ կը զանեմ, քանի օր տու պատվի հետև կան կը գաս:

Մուքասըրըֆ կէլնի, մարթըմ կառնի խընդ ուր, խընդրանց կը գան տուն:

Էտա ճըրու միչու մարթ էն տեղեն էլեր, գացեր էր, պըռնեցին, պերին քննության:

Մուքասըրըֆն ասաց. – Մա՛րթ, էսա խանըմ քյե ի՞նչ ասաց, ի՞նչ խոստացավ, ի՞նչ տառցուց քու գյըլխուն:

Ասաց. – Դողրին ասա՛, ես քյե փարա կը տամ:

Մարթն ուր գըյըլխու էկածն պատմեց էնոր: Ասաց, թե ի՛նչըխ չորս տիր ձի խապեց տարավ, էպի, չում հիտին տիր ձի մըտուց մըչ էսա ճըրուն:

Խանըմ ինքյն ուր ասաց. «Վոլլա՛, իմ գյըլուխն էլ, ըսորն էլ գյընանց»:

Լե մարթն ասաց. – Մեկ էլ հիշարցա՝ տեսա օր էրազ էր, ես էրազի մեչն էր կը տեսներ, գյիտեր, թե դողրի էր:

Մուքասըրըֆ էպի, փեսի գյըլուխ կտրեց, ուր ախչիկ փըսակեց վեր էտա մարթուն: